ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«07» 04 2026թ.
№ ԿԱՌԱՎ/756

«ԷԼ ԹԵՔ ՔՈՄՓ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01846957/
ք. Երևան, Շոպրոնի 21
Հեռ.՝ 091-27-25-25
060-61-60-60

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ Թեք Քոմփ» ՍՊԸ-ի միջև 17.04.2018թ. կնքված N ՄԱԱՇՁԲ-13-6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Էլ Թեք Քոմփ» ՍՊԸ-ն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման արդյունքում պայմանագրի երկու թեմաներով նախատեսված աշխատանքները չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետի «բ» ենթակետը՝ (կատարողը բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները) ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.04.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Էլ Թեք Քոմփ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի **900005028106** հաշվեհամարին փոխանցել **108 934 678 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), **898 060 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.5 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.01.2023թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ՀՀ պետական բյուջեի **900005570115** հաշվեհամարին

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

անհրաժեշտ է փոխանցել **89 806 000 ՀՀ դրամ**՝ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության նկատմամբ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում առկա չմարված պարտավորությունը (հաշվապահական հաշվառման մեջ ձևակերպված դեբիտորական պարտքը):

Տեղեկացնում եմ նաև, որ «Էլ Թեք Քոմփ» ՍՊԸ-ի կողմից ենթակա են վերադարձման ընկերությունում գտնվող 2 միավոր արբանյակային համակարգերի խափանման կայան:
Նշված գումարների վճարված լինելը հավաստող փաստաթղթերի բնօրինակները անհրաժեշտ է մինչև 2026թ. ապրիլի 16-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2077 սենյակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերոգրյալի համաձայն «Էլ Թեք Քոմփ» ՍՊԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ